

## «ԶԱՐԳԱՐԻ» ԼԵԶՈՒՆ ԻՐԱՆՑԻՆԵՐԻ ՄՈՏ

### Գ. Վ. ՄԵԼԻՔԵԱՆ, Ա. Լ. ԽՐՈՄՈՎ

Մեր հանրալեզվաբանության մեջ ուսումնասիրության մի ոլորտ կա, որը, ըստ Ֆ. Պ. Ֆիլիցի «հանիրավի անուշադրության է մատնված և որով զբաղվել են սուկ մի քանի էն-տուզիաստներ»<sup>1</sup>: Դա արգոների (ծածկալեզուներ) և սլայնանական լեզուների ուսումնասիրության ոլորտն է: Իրանագիտության մեջ հետաքրքրություն սկսեց առաջանալ դեպի այդ պրոբլեմը դեռևս դարասկզբին, և այդ մասին են վկայում անգլիացի արևելագետ Դ. Ֆիլլոտի<sup>2</sup> և ուու իրանագետ Վ. Իվանովի<sup>3</sup> աշխատությունները: 20—30-ական թթ. իրանական ժարգոնների ուսումնասիրությամբ ակտիվորեն զբաղվել է խորհրդային իրանագետ Ա. Ա. Ռոմասկևիչը, թեև այդ պրոբլեմին վերաբերող նրա հրատարակումները լույս են տեսել զգալիորեն ավելի ուշ: Իր հոդվածներից մեկում Ա. Ա. Ռոմասկևիչը գրել է, որ իր ձեռքի տակ ունի «նյութեր և դատողություններ թե՛ կուլտուրական իրանական ժողովուրդների և թե՛ նրանց շրջապատող և հարևանության մեջ գտնվող ոչ իրանացիների մասնագիտական լեզուների և ժարգոնների մասին» և հույս ունի հետագայում անդրադառնալ «նշված հարցի ավելի լայն մեկնաբանությանը»<sup>4</sup>:

Ցավոք, նա չիրագործեց իր այդ մտադրությունը: Հետագայում արևելյան լեզվաբանության այդ «էկզոտիկ ոլորտի» (ինչպես պատկերավոր կարելի է անվանել այդ ոլորտությունը) ուսումնասիրությամբ մեզանում չեն զբաղվել մինչև 50-ական թվերի վերջը: Իրանական հիմք ունեցող ժարգոնների ուսումնասիրությունների աշխուժացման համար իրանագիտությունը պարտական է տաղանդավոր արևելագետ, վաղամեռիկ պրոֆեսոր Ի. Մ. Օրանսկուն, որը կատարել է Միջին Ասիայի տարածքում գործառող տարբեր ժարգոնների մի շարք ուսումնասիրություններ<sup>5</sup>:

Միջին Ասիայի իրանական ժողովուրդների մեջ տարածված որոշ պայմանական լեզուներն ակարագրված են Ա. Լ. Խրոմովի հատուկ հոդվածում<sup>6</sup>: Լեզվաբանական գրականության

<sup>1</sup> Ф. П. Филин. К проблеме социальной обусловленности языка.—«Язык и общество», М., 1968, с. 13.

<sup>2</sup> D. C. Phillet. A note on Sign—, Gesture—, Code—, and secret-languange, etc. amongst The Persians.— JASB, New ser., t. III, № 9, 1907, pp. 612—622.

<sup>3</sup> W. Ivanow. On The Language of the Gypsies of Qainat (in Eastern Persia) Journal and proceedings. Asiatic Society of Bengal (New Series), vol. X, № 11, 1914, pp. 439—455.

<sup>4</sup> А. А. Ромаскевич. К вопросу о жаргонах иранских дервишей. Иранские языки. I, М.—Л., 1945, с. 141—144; Որոշ ժարգոնային բառեր և արտաբայություններ կարելի է գտնել Ռ. Գալուզովի հոդվածում, տե՛ս Բ. Ա. Գալուզով. «Материал для словаря эстелатагов в Персии».—Записки Института востоковедения АН СССР, I, М., 1932, с. 291—321.

<sup>5</sup> И. М. Органский. Новые сведения о секретных языках /арго/ Сердней Азии: Материалы для изучения арго этнографической группы Джуги /Гиссарская долина/—«Иранская филология». Изд. ЛГУ, 1964. Այս հոդվածում կա իրանալեզու ժարգոնների մատենագրություն, նույնի Ինդոիրանские диалекты парья, говоры и арго таджикоязычных этнографических групп. Материалы и исследования. Автореферат докторской диссертации. Л., 1967, էջ 41—55.

<sup>6</sup> А. Л. Хромов. Условные языки у иранских народов.—«Восточная филология», IV, Душанбе, 1976, с. 3—19.

մեջ այդ «լեզուները» սովորաբար դիտում են որպես հատուկ տեսակի ժարգոններ<sup>7</sup>: Դրանք անվանում են նաև հատուկ լեզուներ, գաղտնալեզուներ (ծածկալեզուներ), դարձուցակազմերի տարաբարյան լեզուներ, աշակերտական արգոներ (ծածկալեզուներ)<sup>8</sup>:

Անկախ նրանից, թե որ բնական լեզվի հիմքի վրա են կառուցված այդ լեզուները, նրանք ունեն հետևյալ ընդհանուր գծերը.

- ա) արհեստականորեն ստեղծված վանկերի ներմուծում սովորական բառերի մեջ:
- բ) բնական խոսքի վանկերի դրափոխություն:
- գ) վանկերի ներմուծումների և դրափոխությունների զուգակցում:
- դ) խոսքի արագ տեմպ:

Նման լեզուների կառուցման սկզբունքների ընդհանրությունը բացատրվում է մասնավորապես նրանով, որ ինչպես ժամանակին նշել է Ժ. Վանդրիեսը, «սովորական խոսքի աղավաղումը պարզազույն հնարքներից է, այն մատչելի է բոլորին»<sup>9</sup>: «Այդ պատճառով, բոլորովին զարմանալի չեն այն ընդհանրությունները, որ նկատվում են այնպիսի տարբեր լեզուների, ինչպիսիք են իրանական, եթովպական և Ֆիլիպինյան կղզիների որոշ լեզուների հիմքի վրա կառուցված արհեստական խոսքերում»<sup>10</sup>:

Իրանում պայմանական լեզուների տարբեր տեսակների գոյության մասին կարելի է դատել իրանցի գիտնական Ս. Կիյաի հետևյալ արտահայտության հիման վրա.

برخی از ایرانیان برای اینکه دیگران گفتگویشان را نفهمند  
زبان فارسی یا گویش خود را با تلفظهای گوناگون (که میتوان آنرا  
یگ گونه بازی شمرد) به صورت نفهمیدنی شگفت انگیزی در میا  
ورند. این گونه زبانهای ساختگی یا قرار دادی میتواند میان دوتن  
یا گـروهی بکار رود و نامی ترین و همگانی ترین نمونه اینگونه زبان  
زرگری است ...

«Որոշ իրանցիներ իրենց խոսքը անհասկանալի դարձնելու նպատակով, արտահայտության տարբեր ձևերի միջոցով (դա կարելի է անվանել յուրատեսակ խաղ) զարմանալիորեն փոխակերպում են պարսկերենը կամ իրենց մայրենի խոսվածքը և դարձնում այն անհասկանալի: Այսպիսի արհեստական կամ պայմանական լեզուներ կարող են օգտագործվել երկու մարդու, կամ մարդկանց իմքի կողմից: Դրացից ամենամանաչվածը և ամենատարածվածը «զարգարին» է<sup>11</sup>:

<sup>7</sup> В. Жирмунский. Национальный язык и социальные диалекты. Л., 1946, с. 154—158; Ж. Вандриес. Язык, М., 1937, с. 231—236; В. А. Звегенцев. Очерки по общему языкознанию, издательство МГУ, 1962, с. 266—269; Общее языкознание. Формы существования, функции, история языка, М., 1970, с. 486—491. Նշված աղբյուրներում պայմանական լեզուների բազմաթիվ օրինակներ կան, որոնք կառուցված են ռուսերենի և արևմտաեվրոպական լեզուների բազայի վրա:

<sup>8</sup> Հմմտ. Վ. Դալի բառարանում «Тарабарский язык школьников состоит в перестановке или замене согласных, по известному правилу, тогда как гласные остаются неизменными...» (Владимир Даль. Толковый словарь живого великорусского языка, т. I, 1880, переиздание 1956 г., с. XXVIII).

<sup>9</sup> Ж. Вандриес. Язык, էջ 236.

<sup>10</sup> S. Leslau, Wolf, An Ethiopian Minstrels' argot. JAOS, vol. 72, № 3, 1952, pp. 102—109; Conclin, Harold. Linguistic Play in its cultural Context.— "Language in Culture and society. A reader in Linguistics and Anthropology". New York, Evanston and London, pp. 295—300.

<sup>11</sup> صادق کتیا، راهنمای گردآوری گویشها، ص ۱۴  
«Զարգարի» լեզվին ժամանակին ուշադրություն է դարձրել գերմանացի դիվանագետ Գ. Բրուզզը, որը 1860—1861 թթ. այցելել էր Պարսկաստան: Բոլոր բնակավայրում նա գրի էր առել «զարգարիի» նմուշներ: Բրուզզի վկայությամբ տեղի բնակիչները համարում էին իրենց Ալեքսանդր Մակեդոնացու հետնորդներ և ասում էին, որ «զարգարիում» կան շատ հունական բառեր (տե՛ս Brugsch, Heinrich. Reise der K. Preussischen gesandtschaft nach Persien 1860 und 1861. Erster Band, Leipzig, 1862, pp 339—340).

Պարսիկների մեջ առավել լայն տարածում է գտել -z- և -b- բաղաձայնները պարունակող վանկերի ներմուծման հիման վրա կառուցված «գարգարիմ»<sup>12</sup>:

1) māzān azamāzadāzām, vāzālizi šozomaza nāzābuzudizid, bāzād rāzāfāzātāzām  
bcze xazaneze

من آمدم ولی شما نبودید ، بعد رفتم بخانه

«Ես եկա, բայց դուք չկայիք, և ես գնացի տուն»:

2) mābān dibirubuz toboraba dibidā bām

«Ես երեկ քեզ տեսա»:

من دیروز ترا دیدم

Հանդիպում եմ պայմանական լեզուների նաև այլ տեսակներ.

ա) زبان مرغی zaban-e morγī «ծոխ լեզու», որը հիմնված է 'r' և 'γ' բաղաձայ-

ները պարունակող վանկերի միաժամանակյա ներմուծման վրա:

kirtiγāb = kitāb 'գիրք', birdiγa = bidih 'տուր', bermeyan = be man 'ինձ', niryān = nān 'հաց'.

բ) ill վանկի ներմուծում nillān = nān 'հաց', killtillab = kitāb 'գիրք'.

գ) վանկերի դրափոխությունը šir < rīš 'մորուք':

դ) -au- երկարաբառի ներմուծում kauki-tautāb = kitab, baubidaudih = bidih<sup>13</sup>:

Նման պայմանական լեզուներ արձանագրված են նաև օսերի շրջանում: Դրանցից մեկը կոչվում է «աղջնական»: Այն կառուցվում է «դ» և «ֆ» բաղաձայնները պարունակող արհեստական վանկերի ներմուծմամբ: Kuguzrγxγx կամ kuφuzrγφx < kuzrγx «աղջիկ»:

Օսերի մոտ այդպիսի պայմանական լեզվի օգտագործման մասին մեզ սիրով հաղորդեց բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Յազանան: Հենց նա էլ մեր ուշադրությունը հրավիրեց Գ. Ս. Ախվլեդիանիի հոդվածի վրա, որը զետեղված է վերջինիս գրքում «Сборник избранных работ по осетинскому языку». часть I, ինչպես նաև տեղեկացրեց պրոֆ. Բ. Ա. Ալբորովի ձեռագրերի ֆոնդում գտնվող հատուկ աշխատության մասին:

«Ջարգարի» տիպի լեզու օգտագործում են նաև քրդերը: Ապրիորի կարելի է ենթադրել նման պայմանական լեզուների գոյությունը նաև այլ իրանալեզու ժողովուրդների՝ թաթերի, թալիշների, զիլանցիների, բելուջների, փուշտունների մոտ:

Հատկանշական է, որ արաբերենի իրաքյան բարբառի հիման վրա ստեղծված պայմանական լեզուներում օգտագործվում է նույն սկզբունքը, ինչ և պարսկերենում ու տաջիկերենում՝ «զ» և «սկ» բաղաձայնները պարունակող վանկերի ներմուծմամբ:

Ազայնագա-տագարուզուր կամ այսկանակա տասկարուսկուր այնա տարուր—«ո՛ր ես գնում»:

Ծածկալեզուները օգտագործվում են նաև հայերենում: Օրինակ՝ «թարսերենում». միավանկ բառերը լիովին են շրջվում (հաց-ցահ, շատ-տաշ, մեծ-ծեմ), քաղմավանկերի միայն առաջին վանկերը (հասներսահնել, քախտավոր-խարտավոր), հծծերենում քառից կամ վանկից առաջ արտասանվում է զ (ինչ-զինչ, ասել-զասել, տարի-զտարի, ամոթ-զամոթ), իսկ մնջերենում՝ քառի մեջ եղած յուրաքանչյուր ձայնավորից առաջ հավելվում է գ, ճ, ք կամ ֆ բաղաձայններից որևէ մեկը (օրինակ՝ ֆ-ով մեծ տուն—մֆեծ տֆուն, գ-ով՝ ինչ ես ասում—գինչ գես գասգում): Հայերի շրջանում տարածված են եղել նաև մասնագիտական արգոներ, որոնցից մեկի՝ այսպես կոչված քաթաներենի համառոտ քառարանը ժամանակին Մոկսում գրի է առել Հ. Օրբելի<sup>14</sup>: Այս լեզուն սահմանափակված է եղել միայն բուրդ գողների շրջանում:

Տարբեր պայմանական լեզուներ և ժարգոններ վաղուց ի վեր տարածված են եղել Իրանի, Աֆղանստանի և Միջին Ասիայի տարածքներում: Հիշատակումներ նման լեզուների մասին մենք գտնում ենք միջնադարյան գրավոր աղբյուրներում: Այսպես, 10-րդ դարի անանու հեղինակի «Աշխարհի սահմանները Արևելքից մինչև Արևմուտք» գրքում (Հուդուդ-ալ-Ալամ) հաղորդվում է այն մասին, որ իրանական Գորգան գավառի կենտրոնում՝ Աստարա-

<sup>12</sup> Ներկայումս Իրանում պայմանական լեզուն անվանելու համար լայնորեն օգտագործվող «գարգարի» անվանումը տաջիկները չեն օգտագործում, սակայն «գարոնի գարգարի» տերմինը «գարգարի» լեզու (ոսկերիչների ծածկագիր մասնագիտական լեզու) իմաստով հանդիպում է «Տաջիկերեն»-ոուսերեն քառարանում» (Մ., 1954, էջ 151), ուր այն անցել է միջնադարյան ֆարսանգներից:

<sup>13</sup> D. C. Phillot, Ըշվ աշխ., էջ 620—621:

<sup>14</sup> И. А. Орбели. Фольклор и быт Мокса. М., 1982, с. 8.

քաղ քաղաքում խոսել են երկու լեզվով՝ Գորգանի պարսկերենով և lwt'r' լեզվով<sup>15</sup>: Հաշվի առնելով, որ Աստարաքաղը եղել է արհեստավորների քաղաք, ինչի մասին նույնպես հաղորդվում է այդ աղբյուրում և որ lwt'r' տերմինը միջնադարյան քառարաններում բացատրվում է որպես երկու անձանց պայմանական լեզու, որը ծառայում է ասելիքի իմաստը ուրիշներից թաքցնելու համար և հայտնի է նաև «զարգարի» անվամբ, կարելի է եզրակացնել, որ դա եղել է մասնագիտական արգո<sup>16</sup>:

Հատկանշական է, որ Վ. Ֆ. Մինորսկին աստարաքաղյան ժարգոնի անվանումը չի թարգմանել, այլ գրադարձել է որպես lwt'r', դնելով հարցական նշան: Այդ տերմինը «զարգարի» տերմինի հետ մեկտեղ հանդիպում է շատ միջնադարյան ֆարհանգներում և բացատրվում է համարյա նույն ձևով:

Այսպես, برهان قاطع բառարանում կարդում ենք.

لتره ... بضم اول زبان قرار داد شد میدان دوکس که باهم تکلم کنند  
و دیگران نفهمند

«Latre նշանակում է երկու անձանց պայմանական լեզու: Երբ նրանք խոսում են այդ լեզվով, մյուսները չեն հասկանում»: Այնուհետև՝ «երկու անձանց պայմանավորվածությամբ օգտագործվող անսովոր մի լեզու, որպեսզի, երբ նրանք խոսում են իրար հետ, ուրիշները չհասկանան, և այն անվանում են նաև «զարգարի» լեզու (այդ բառը) հանդիպում է նաև «հանելուկ» իմաստով»<sup>17</sup>:

Մոտավորապես նույնն է ասվում նաև فرهنگ رشیدی Tarhange Rašīdī բառարանում. lwt'r' և lwt'rh երկու անձանց պայմանական լեզու, որը ծառայում է նրան, որպեսզի ուրիշները նրանց չհասկանան: Այն անվանում են նաև «զարգարի»<sup>18</sup>:

Համեմատենք, սակայն նույն բառարանում.

«l'rh—երկու անձանց պայմանական լեզու, երբ նրանք խոսում են, նաև այն հայտնի է որպես «զարգարի»: Բացի դա, այդ բառը ունի նաև՝ «մարդ, որը ինչ լսում է, իսկույն տարածում է, քերամքաց (և նաև) պատռոտված, թին հագուստ»<sup>19</sup>:

مجمع الفرس բառարանում տրվում է հետևյալ բացատրությունը.

«Լուրթա—հանելուկ և խոսք, որն անհնարին է հասկանալ, այն անվանում են նաև «զարգարի լեզու»<sup>20</sup>:

Հիմնվելով ձեռագրերի նյութի վրա, այս ձևերը կարելի է կարդալ որպես lutar(e), lōtrā, lōtarā, lōtar(e) և նույնիսկ՝ latr(ə):

Պարսկերենի եվրոպական բառարաններ կազմողները փոխառել են ֆարհանգների բացատրությունները, առանց սեփական մեկնաբանությունները ավելացնելու:

Վուլլերսի բառարանում քերվում են այդ ձևերի հետևյալ իմաստները.

1) «հանելուկ» (aenigma) և 2) «երկու անձանց պայմանավորվածությամբ օգտագործվող «պայմանական լեզու»: Որպեսզի խոսքը ուրիշներին անհասկանալի լինի, (lingua arsana inter dous constituta, ne alii intelligant)<sup>21</sup>:

Ֆ. Ստեյնգասի բառարանում՝ «զարգարի»՝ բարբառի տարատեսակ, այնուհետև՝ «Լուրթա—նախախոսք, որ օգտագործվում է երկու անձանց կողմից և անհասկանալի է ուրիշներին»<sup>22</sup>:

<sup>15</sup> Hudūd al-‘Ālam. “The regions of the world”. A Persian Geography 372 A. H.—982 A. D. Translated and explained by V. Minorsky. Second edition. London, 1970, p. 134.

<sup>16</sup> «Ջարգարի» (սուկերիչների լեզու) անվանումը հաստատում է այն փաստը, որ ըսկըզբնապես այն եղել է մասնագիտական բարբառ:

<sup>17</sup> Մեջբերումը քաղել ենք 18-րդ դարի սկզբի ձեռագրից:

<sup>18</sup> فرهنگ رشیدی، ص ۱۲۰۰ — ۱۲۸۱

<sup>19</sup> նույն տեղում, էջ 1285:

<sup>20</sup> مجمع الفرس، جلد سوم، ص ۱۲۵۳

<sup>21</sup> J. Aug. Vullers. Lexicon Persico—Latinum etymologicum..., t. II, 1864, pp. 1102, 1082.

<sup>22</sup> F. Steingass. Comprehensive Persian-English Dictionary, London, 1892, p. 1117.

Այդ նույն բառարանում ۵ لوتر lotar, لوترا lotara, لوتر lotara «խոսելու գաղտնի ձև, հանելուկ»<sup>23</sup>:

Ժամանակակից պարսկերենի բառային կազմը բավական ամբողջական ներկայացնող երկհատոր «Պարսկերեն-ռուսերեն բառարանում» չկա lwtr՝ բառը (բայց կա زرگری<sup>24</sup>):

Ներկայումս «լուտարայ» տերմինը գործածվում է որպես Իրանի հրեական համայնքի արգոյի անվանում: Այն ծառայում է «համայնքի անդամների խոսակցության գաղտնիքի պահպանմանը guim-ի ներկայությամբ (եբր. goyim), այսինքն ոչ հրեաների ներկայությամբ»<sup>25</sup>:

Ո՞րն է այդ բառի ստուգաբանությունը: Ըստ երևույթին այն ունի հնդկական ծագում: Այդ մասին են խոսում հետևյալ փաստերը: Միջին Ասիայի և Իրանի պայմանական-մասնագիտական արգոներում լայնորեն է ներկայացված հնդկական ծագում ունեցող բառաշերտերը: Միջին Ասիայի և Իրանի արհեստավորներից շատերը հնդկական ծագում ունեին:

«Lōlārā» «լութարա» անվանման և նրա տարբերակների հնչյունային կազմը ենթադրել է տալիս այդ բառի ոչ իրանական ծագումը: Հինդի և ուրդու լեզուներում հանդիպում է lutrā բառը lutra տարբերակով մի քանի իմաստով՝ «դուրս նետված», «վտարված», «մերժված», «շողորքորթ», «տխմար», «շաղակրատ», «բանբասկոտ», «գրպարտող»<sup>26</sup>:

Այլ մեկնաբանություն է առաջարկում պրոֆ. Յարշաթերը: Նա գրում է lōlārā-ով խոսողները առաջարկում են տարբեր բացատրություններ, որոնցից մեկը ճշմարտաման է թըվում, այսինքն «ոչ հրեական», այսինքն \*lo-Torah...

Հնարավոր է, որ տերմինը պարսկերեն է փոխառնվել հրեաներից և որ Աստարաբադում «լութերայ» լեզվով խոսողները ներկայացնում էին հրեական համայնքը»<sup>27</sup>: Կարծում ենք, որ տվյալ դեպքում, խոսքը հնչյունական նմանության վրա հիմնված «ժողովրդական ստուգաբանության» մասին է:

«Ջարգարի» տիպի լեզուները ներկայումս օգտագործվում են գերազանցապես երեխաների և պատանիների շրջանում<sup>28</sup>: Միաժամանակ դրանք ծանոթ են մեծահասակների լայն շրջանակներին: Դրանք օգտագործում են նաև այն ժամանակ, երբ որևէ բան թաքցնելու խիստ անհրաժեշտություն չկա: Այսպիսով, նման գաղտնախոսությունը թվացյալ է դառնում, լավագույն դեպքում դա գաղտնախոսության խաղ է: Հաշվի առնելով, որ այդպիսի լեզուների օգտագործման պայմանը խոսքի արագ տեմպն է, կարելի է դրանք անվանել պայմանական լեզուներ—չուտասելուկներ: Դրանք կարող են լինել երկու գիտությունների՝ լեզվաբանության և ազգագրության ուսումնասիրության առարկա: Սկզբնապես ծագելով որպես պայմանական-մասնագիտական արգոներ, «զարգարի» տիպի լեզուները՝ ծառայել են որպես գաղտնախոսության միջոց, սակայն հետզհետե նրանց գործունեության ոլորտը ընդլայնվել է, և նրանք կորցրել են իրենց գաղտնապահական բնույթը, վերածվելով արտահայտչականության, զգացմունքայնության, ժամանցի միջոցի: Նկարագրելով աշակերտական արգոները Վ. Ժիրմունսկին բնութագրում է դրանք որպես յուրատեսակ լեզվական խաղ<sup>29</sup>:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 1181:

<sup>24</sup> Պարսկերեն-ռուսերեն բառարան, Յու. Ա. Ռուբինշիկի խմբագրությամբ, № 1970:

<sup>25</sup> Jarshater Ehsan, The hybrid language of the Jemish communities of Persia.— JAOS, vol. 97, № 1, 1977, pp. 1—7.

<sup>26</sup> John T. Plattes, A Dictionary of urdū, classical hindī and english, t. II, London, 1959, p. 951. հմտ. նաև հին հնդկերեն lo'tam, lotram «ավար», «զողոն(ք)» (M. Mayrhofer, Kurzgefasstes etymologisches Wörterbuch des Altindischen, Lieferung 19, Heidelberg, 1967, s. 114).

<sup>27</sup> Յարշաթեր, նշված աշխ., էջ 2:

<sup>28</sup> Պարսիկ գրող Ս. Ջամալ-Ջադեի դիտողությամբ «զարգարին» արհեստական պայմանական լեզու է, որը գերազանցապես օգտագործվում է կանանց և աղջիկների շրջանում, տե՛ս

سید محمد علی جمال زاده ، فرهنگ لغات عامیان ، تهران ، ۱۳۴۱ ص ۱۸۱  
Այս լեզվի մասին տե՛ս նաև Г. С. Асатрян, Обряды детства и воспитание детей в традиционной культуре персов.—В кн.: Этнография детства. М.. 1983, с. 77.

<sup>29</sup> В. Жирмунский, նշվ աշխ., էջ 154:

Ինչպես արդեն նշել ենք, «զարգարին» յուրատեսակ խաղ է համարում նաև Սադեղ Կիսան. میتوان آنرا یک گونه بازی شمرد

Բայց և այնպես խոսքի «զադտնի անցման» բոլոր միջոցներից սովորական խոսքի արհեստական աղավաղումը, իսկական արգոյի կառուցման համար առավել քիչ կիրառվող միջոցն էր: Այդ նպատակով ավելի հաճախ օգտագործվել են ուրիշ միջոցներ՝ առաջին հերթին մայրենի լեզվի բառերի վերախմաստավորմամբ (իմաստային տեղաշարժերի և համապատասխան բառակազմության միջոցով) և օտար լեզուներից բառերի փոխառմամբ<sup>30</sup>: Դա ցայտուն կերպով դրսևորվում է միջնադարյան իրանալեզու արգոներում գրանցված գրային հուշարձաններում:

«Բանու Սասան» համայնքի արգոտիկ բառապաշարը, որ իր շարքերում միավորում էր մուրացկաններին, թափառաշրջիկներին և թափառաշրջիկ դերասաններին, ներկայացված է 10-րդ դարի Աբու Դուլաֆի արաբերեն լեզվով գրված «Սասանյան Կասիդ»<sup>31</sup> գրքում և այսպես կոչված «Գիրք աղքատաց»-ում (Ketab-e Sāsīyān), որը կազմված է անհայտ հեղինակի կողմից ֆարսի լեզվով<sup>32</sup>:

«Գիրք աղքատաց»-ի ձեռագիրը պահվում է Ուզբեկական ԽՍՀ ԳԱ ձեռագրերի ֆոնդում (№ 2212/ՔXV): Այն նկարագրվել է Ա. Է. Շմիդտի կողմից: Ձեռագրերի բովանդակության ընդհանուր նկարագրությունը տրված է Ա. Լ. Տրոնցկայի ծավալուն հոդվածում, որը նվիրված է Միջին Ասիայի դերասանների և երաժիշտների համաքառության արգոյի ուսումնասիրությանը<sup>33</sup>:

«Գիրք աղքատաց»-ը իրենից ներկայացնում է ոչ մեծ հասկացական բառարան, որը բաղկացած է հետևյալ յոթ գլխից.

Մարմնի մասերի անվանումների մասին, տարբեր արտահայտությունների մասին, անունների մասին, տնային կահ-կարասու մասին, քաղաքների և տեղանքների մասին, բայերի մասին, թվականների մասին: Ժարգոնային բառերը և արտահայտությունները, ցավոք, ոչ միշտ է որ առանձնացվում են դիակրիտիկ նշաններով, թեև յուրաքանչյուր բառի դիմաց տրվում է նրա համարժեքը ֆարսի լեզվով:

Արգոտիկ բառերի ոլորտում հանդիպում են սեմական ծագում ունեցող արաբական, ասորական, հրեական բառեր<sup>34</sup>:

«Բանու Սասան» համայնքի արգոյում արաբական բառապաշարային միավորները հանդիպում են բավական հաճախ: Դրանք հիմնականում արաբական բառապաշարի հիմքի վրա արհեստականորեն ստեղծված փոխաբերական բառակապակցություններ են, օրինակ.

|                 |  |
|-----------------|--|
| abū-šāmih       | ‘ձուկ’ (բառացիորեն «Մեծ»)              |
| abū-l-abbās     | ‘քացախ’ (բառացիորեն «խոժոռ», «խիստ»)   |
| šamāl           | ‘չամիշ’ (բառացի ‘զեղեցիկ տղամարդ»)     |
| abū-l-gurbān    | ‘այծ’ (բառացիորեն «զոհ»)               |
| abū-l-farağ     | ‘բանալի’ (բառացիորեն «բացիշ»)          |
| ummu-l-mu’minin | ‘արջ’ (բառացիորեն «մայր ուղղափառների») |
| abū wādih       | ‘դիրհեմ’ (բառացիորեն ‘«պայծառ» և այլն: |

Դիրհեմների հաշվելը մեկից մինչև ութ կատարվում էր «աբջադի» այսինքն, արաբական այբուբենի հնագույն հաշորդականությունը ցույց տվող և թվային արժեք ունեցող ութ արաբական բառերի միջոցով abğad «մեկ դիրհեմ», hawwā «երկու դիրհեմ», hutti «երեք դիրհեմ» և այլն:

Դրա հետ միասին «Գիրք աղքատացի» հեղինակը ընդգծում է, որ այդ թվային կարգից օգտվում են այն ժամանակ, երբ չեն ցանկանում կողմնակի մարդկանց հասկանալի լինել:

<sup>30</sup> Նույն տեղում:

<sup>31</sup> Bosworth. The Mediaeval Islamic underworld. The Banu Sasan in Arabic Society and Literature... Leiden, E. J. Brill, 1976.

<sup>32</sup> Собрание восточных рукописей АН Узбекской ССР, т. 1, Ташкент, 1962, с. 196—197.

<sup>33</sup> А. Л. Троицкая, Abdoltili —про цеха артистов и музыкантов Средней Азии.—Советское востоковедение, V, М.-Л., 1948, с. 251—274.

<sup>34</sup> «Բանու Սասան» արգոյում օգտագործվող հրեական բառերին է նվիրված Կ. Է. Բոսվորտի հոդվածը (տե՛ս C. E. Bosworth. Jewish Elements in the Banū Sāsān.—Bibliotheca orientalis, XXXIII, № 5—6, 1976, pp. 289—294.

Չաղտնագրման նպատակով արաբական բառերի օգտագործումը նկատվում է նաև Միջին Ասիայի և Իրանի գնչուների ու դերվիշների արգոյում<sup>35</sup>: Իբրև կանոն, այդ բառերը հավելվում են իրանական ծագում ունեցող ածանցներով, օրինակ =ak կամ =ik kal'pak, kal'pik 'շուն' (համեմատիր արբ. kalb 'շուն') yadak 'ձեռք' (հմ. ար. yad 'ձեռք'):

Արհեստական խոսքի մի տարատեսակ էլ արտացոլված է այսպես կոչված «երկնային լեզվի» բառարանում, որը կազմվել է մոտավորապես 18-րդ դարում և հրատարակվել է 1888 թ. Բոմբեյ քաղաքում (բառարանի մանրամասն նկարագրությունը կա Դեմիտրայի բառարանին կից Փուր Դավուդի հատուկ հոդվածում)<sup>36</sup>:

«Դասաթիրի» կազմողը օգտագործել է հետևյալ բառակազմական միջոցները

1. Իրականում գոյություն ունեցող պարսկերեն բառերին նոր իմաստներ է տվել, ընդ որում միանգամայն կամայականորեն, այսպես آمیغ جانشان آموزش پاورդ ասաթիրում ունի «ճշմարտություն», «ճշմարիտ» իմաստը, այստեղից էլ՝ ածանցավոր آمیغی «իրական» բառը:

2. Ի հակադրություն արաբական բառերի, նրանք ստեղծել են նույն իմաստով արհեստական պարսկերեն բառեր, օրինակ بیهوده معمور բառի փոխարեն آیدانه آیدانک այսինքն՝ Կաաբա. هر سو به پادشاهان ملوگ الطوائف բառի փոխարեն «ցեղերի առաջնորդներ» և այլն:

3. Որոշ բառեր կազմվել են իրական պարսկերեն բառերի կաղապարներով չնչին հընչյունական փոփոխություններով. خورشید «լուսին»՝ «արև» բառի օրինակով:

4. Բառապաշարի մի զգալի մասն է կազմում այն բառերը, որոնք արհեստականորեն հնչյունափոխվել են: Դա կատարվում է կամ վերջատման, կամ հավելման, կամ էլ բաղաձայնի փոխարինման միջոցով: Կազմողը նախապատվություն էր տալիս բառաստեղծության հենց պարզունակ միջոցին: Օրինակ,

|                                  |                |
|----------------------------------|----------------|
| զամին «հող» բառի փոխարեն տրված է | զիր            |
| չահար «չորս»՝                    | չսար           |
| դոշման «թշմամի»՝                 | դոշմիր         |
| մարդոմ «ժողովուրդ»՝              | մորթաջ և այլն: |

Ահմադ Քյարապին նույնպես օգտագործել է արհեստական խոսքի էլեմենտներ:

Ժամանակակից հասարակության մեջ պահպանված պայմանական լեզուների և արգոների հաղորդակցական դերը պայմանավորված է այս կամ այն երկրի սոցիալ-քաղաքական պայմաններով: Խորհրդային Միությունում այդ սոցիալական բարբառները գտնվում են անհետացման պրոցեսում: Սոցիալիստական հասարակության արագ զարգացման հետևանքով տեղի են ունենում ԽՍՀՄ ժողովուրդների, այդ թվում նաև իրանական ժողովուրդների սոցիալական բարբառների նկատելի փոփոխություններ: Այդ կապակցությամբ չի կարելի չհամաձայնվել Ֆ. Պ. Ֆիլինի հետևյալ դիտողության հետ. «Մեր օրերում պայմանական մասնագիտական լեզուները ապրում են իրենց վերջին օրերը»<sup>37</sup>: Ըստ երևույթին նրանք փոքր ինչ այլ վիճակում են գտնվում Արևելքի որոշ արտասահմանյան երկրներում: Անհրաժեշտ է կատարել կոնկրետ հանրալեզվաբանական ուսումնասիրություն ժամանակակից նյութի հիման վրա:

Ժամանակակից արևելյան լեզուներում առանձին տեղ է գրավում երիտասարդական ժարգոնը՝ քաղաքի երիտասարդության խոսքում օգտագործվող սպեցիֆիկ բառերի և իդիոմատիկ արտահայտությունների մի ամբողջություն, որն ունի առանձնահատուկ արտահայտչականություն<sup>38</sup>: Երիտասարդական ժարգոնների ի հայտ գալը արևելյան լեզուների օգտագործման տարածքում, համեմատաբար նոր երևույթ է, որը կապվում է քաղաքի բնակչության, առավել ևս սովորող երիտասարդության քանակային աճի հետ<sup>39</sup>:

<sup>35</sup> Տե՛ս Ի. Մ. Օրանսկու և Վ. Իվանովայի վերոհիշյալ աշխատությունները:

<sup>36</sup> ابراهيم پور دود ، دساتير ، لغت نامه دهخدا شماره مسلسل ٤٠ مقدمه ص ٤٤ — ٦٢

<sup>37</sup> Ф. П. Филин. Гзվ աշխ., էջ 18:

<sup>38</sup> Տե՛ս М. М. Копыленко. О семантической природе молодежного жаргона. — «Социально-лингвистические исследования». М., 1967, էջ 79:

<sup>39</sup> Տաջիկերեն լեզվում երիտասարդական ժարգոնի գործածության մասին տե՛ս Ա. Լ. Խյոմովի նշվ. աշխ., էջ 18—19:

Ժարգոնների ուսումնասիրության ընթացքում նպատակահարմար է ելնել խոսողի դիրքերից «վերլուծել սկզբից նշանակելիների կառուցվածքը, իսկ հետո դրանց անվանման միջոցները և ձևերը»<sup>40</sup>: Այս դեպքում կուտակված նյութը ներկայացվում է գաղափարական բառարանի տեսքով, որը ներառնում է իր մեջ իմաստաբանական սնույկների համեմատաբար ոչ մեծ քանակ: Երիտասարդական ժարգոնների ուսումնասիրությունը Խորհրդային Արևելքի հանրապետություններում հետաքրքրություն է ներկայացնում ազգային-ուսական երկլեզվության պայմաններում դրանց գործառության առանձնահատկությունների վերահաման տեսակետից:

Արևելյան արգոների և սլենգների ուսումնասիրության ընթացքում պետք է հենվել սլավոնական և ռոմանագերմանական լեզվաբանության քննազավտում կուտակած հարուստ փորձի վրա:

Մինչև այժմ ժարգոնների և արգոնների ուսումնասիրությունը կատարվել է ընդհանրապես սոցիալական բարրանների ուսումնասիրության շրջանակներում: Մինչդեռ դա, ըստ Փիրմունսկու, հանրալեզվաբանական մի պրոբլեմ է, որը սկզբունքորեն տարբերվում է սոցիալական բարրանների պրոբլեմից և պահանջում է ինքնուրույն ուսումնասիրություն:

**Г. В. МЕЛИКЯН, А. Л. ХРОМОВ—Язык «заргари» у иранцев.—** В иранистике интерес к изучению арго и условных языков стал проявляться еще в начале нашего века, о чем свидетельствуют работы английского востоковеда Д. Филлота и русского ираниста В. Иванова. Активно занимался изучением иранских жаргонов в 20—30 гг. советский иранист А. А. Ромакоевич. В последующие годы к изучению этой «экзотической сферы» языкознания долго не обращались.

Различные условные языки и жаргоны издавна были распространены на территории Ирана, Афганистана и Средней Азии, что нашло отражение в средневековых письменных памятниках Так, в анонимном сочинении X в. «Границы мира от Востока до Запада» («Худуд-ал-алам») сообщается о том, что в центре иранской провинции Горган, городе Астарабаде, говорили на двух языках: на персидском языке и на языке «лутера». Учитывая, что Астарабад был городом ремесленников и что термин «лутера» в средневековых толковых словарях объясняется как условный язык двух лиц, предназначенный для того, чтобы скрыть смысл высказывания от других, и известный также под названием «заргари» (дословно «язык ювелиров») можно сделать вывод, что это был профессиональный арго. Возникнув первоначально как условно-профессиональные арго, «языки» типа «заргари» служили средством тайноречия, однако постепенно сфера их употребления расширилась, и они потеряли свой крипто-лалический характер, все более и более превращаясь в средство выражения экспрессии, эмоции, развлечения. Из всех способов «засекречивания» речи способ искусственного искажения нормальной речи был менее популярен при построении подлинного арго. Для этого чаще всего применяли такие средства, как пересмысление лексического материала родного языка (с помощью семантических сдвигов и соответствующих приемов словообразования) и иноязычные заимствования. Это ярко проявляется в средневековых ираноязычных арго, зафиксированных в письменных памятниках.

Особое место в современных восточных языках занимает молодежный жаргон. Само появление молодежных жаргонов во многих регионах распространения восточных языков относится к сравнительно недавнему времени и связано с ростом городского населения, особенно с ростом контингента учащейся молодежи. При исследовании восточных арго следует опираться на богатый опыт, накопленный в славянском и романо-германском языкознании.

<sup>40</sup> М. М. Копыленко, *ԳԶՎ. աշխ.*, էջ 90: